

2174

Վ. Ի. ԼԵՆԻՆ

ՖՐԻԴՐԻԽ
ԷՆԳԵԼՍ

ՅԿ 23

Տ-88

ՊԱՊԱՐԱՆԱՆ ԴՐԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ● 1940

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻՍՏՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ
02 JUN 2005

174 NOV 21

3K 23
\$-28

Վ. Ի. ԼԵՆԻՆ

այ.

ՖՐԻԴՐԻԽ
ԷՆԳԵԼՍ



ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԱԶՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ • 1940

2174

11 SEP 2013



759
41

В. И. ЛЕНИН
ФРИДРИХ ЭНГЕЛЬС

Государственное издательство политической литературы
Ереван ● 1940



ՖՐԻԴՐԻԽ ԷՆԳԵԼՍԸ 1839 թվին



ՖՐԻԴՐԻԽ ԷՆԳԵԼՍ

Մտքի ինչպիսի՜ լուսատու ջահ մարեց,
Ինչպիսի՜ սիրտ դադարեց բարախելուց։

Նոր տոմարով 1895 թվականի օգոստոսի 5-ին (հուլիսի 24-ին) Լոնդոնում վախճանվեց Ֆրիդրիխ Էնգելսը։ Իր բարեկամ Կարլ Մարքսից հետո (որը մեռել էր 1883 թվականին) Էնգելսն արդի պրոլետարիատի ամենանշանավոր գիտնականը և ուսուցիչն էր ամբողջ քաղաքակիրթ աշխարհում։ Այն ժամանակներից սկսած, երբ բախտն իրար հանդիպեցրեց Կարլ Մարքսին ու Ֆրիդրիխ Էնգելսին, երկու բարեկամների կյանքի աշխատանքը նրանց ընդհանուր գործը դարձավ։ Այս պատճառով էլ, որպեսզի հասկանանք, թե ինչ է արել Ֆրիդրիխ Էնգելսը պրոլետարիատի համար, պետք է պարզորոշ յուրացնենք այն, թե արդի բանվորական շարժման դարգացման մեջ ինչ նշանակություն ունի Մարքսի գործունեությունը և ուսմունքը։ Առաջինը Մարքսըն ու Էնգելսն էին, որ ցույց տվին, թե բանվոր դասակարգն իր պահանջներով անհրաժեշտ ծնունդ է արդի տնտեսակարգի, որը բուրժուազիայի հետ կողք-կողքի անխուսափելիորեն ստեղծում և կազմակերպում է պրոլետարիատին. նրանք ցույց տվին, որ ո՛չ թե առանձին ազնիվ անհատների բարեմիտ փորձերը, այլ կազմակերպված պրոլետարիատի դասակարգային պայքարը կազատի մարդկությունն այն թշվառություններից, որոնք ճնշում են նրան։ Առաջինը Մարքսն ու Էնգելսն էին, որոնք իրենց գիտական աշխատությունների մեջ պարզաբանեցին, թե սոցիալիզմը ո՛չ թե երազողների մտքի հերյուրանքն է, այլ արդի հա-



ունեցած զբաղմունքներն արգելք չեղան էնգելսին՝ աշխատելու իր գիտական ու քաղաքական կրթության վրա: Դեռևս գիմնազիստ եղած պահին նա ատել էր ինքնակալությունն ու աստիճանավորների կամայականությունը: Փիլիսոփայությամբ զբաղվելը նրան է՛լ ավելի առաջ մղեց: Այն ժամանակ գերմանական փիլիսոփայության մեջ տիրապետում էր Հեգելի ուսմունքը, և էնգելսը նրա հետևորդը դարձավ: Թեև ինքը Հեգելը երկրպագու էր պրուսական ինքնակալական պետության, որի ծառայության մեջ էր նա իբրև Բեռլինի համալսարանի պրոֆեսոր,—Հեգելի ուսմունքը ուսուցիչն ուսմունք էր: Այն հավատը, որ Հեգելը տածում էր մարդկային բանականության ու նրա իրավունքների նկատմամբ, և հեգելյան փիլիսոփայության այն հիմնական դրույթը, թե տիեզերքում փոփոխման ու զարգացման մշտական պրոցես է կատարվում, Բեռլինի փիլիսոփայի աշակերտներից նրանց, ովքեր չէին ուզում հաշտվել իրականության հետ, բերում, հասցնում էին այն մտքին, թե իրականության դեմ մղվող պայքարը, գոյություն ունեցող անարդարության ու թագավորող չարիքի դեմ մղվող պայքարը հիմնվում է մշտնջենական զարգացման տիեզերական օրենքի վրա: Եթե ամեն ինչ զարգանում է, եթե հիմնարկներից միջանիսին փոխարինելու են գալիս ուրիշները, ապա ինչո՞ւ պետք է մշտնջենապես հարատևեն պրուսական թագավորի կամ ռուսաց ցարի ինքնակալությունը, չնչին փոքրամասնության հարստացումն ի հաշիվ վիթխարի մեծամասնության, բուրժուազիայի տիրապետությունը ժողովրդի գլխին: Հեգելի փիլիսոփայությունը խոսում էր ոգու և գաղափարների զարգացման մասին, այս փիլիսոփայությունն իդեալիստական էր: Ոգու զարգացումից այս փիլիսոփայությունը բղխեցնում էր բնության, մարդու և մարդկային, հասարակական հարաբերությունների զարգացումը: Մարքսն ու Էնգելսը պահելով Հեգելի այն միտքը, թե գոյություն ունի զարգացման հավիտենա-

կան պրոցես¹, դեն նետեցին կանխակալ իդեալիստական հայացքը. դիմելով կյանքին՝ նրանք տեսան, որ ո՛չ թե ոգու զարգացումն է բացատրում բնության զարգացումը, այլ ընդհակառակը, ոգին պետք է բացատրել, բղխեցնել բնությունից, մատերիալից... Հեգելի ու մյուս հեգելյանների հակառակ՝ Մարքսն ու Էնգելսը մատերիալիստ էին: Մատերիալիստորեն նայելով տիեզերքին ու մարդկությունը՝ նրանք տեսնում էին, որ ինչպես բնության բոլոր երևույթների հիմքում մատերիալ պատճառներ են հանդուժ, այնպես էլ մարդկային հասարակության զարգացման պատճառը մատերիալ, արտադրողական ուժերի զարգացումն է: Արտադրողական ուժերի զարգացումից են կախված այն հարաբերությունները, որոնց մեջ մտնում են մարդիկ իրար նկատմամբ՝ մարդկային պահանջները բավարարելու համար անհրաժեշտ առարկաների արտադրության ժամանակ: Եվ այս հարաբերությունների մեջ է հասարակական կյանքի բոլոր երևույթների, մարդկային ձգտումների գաղափարների ու օրենքների բացատրությունը: Արտադրողական ուժերի զարգացումն ստեղծում է հասարակական այնպիսի հարաբերություններ, որոնք խարսխվում են մասնավոր սեփականության վրա, բայց մենք հիմա տեսնում ենք, թե ինչպես արտադրողական ուժերի միևնույն զարգացումը խլում է մեծամասնությունից սեփականությունը և այս կենտրոնացնում չնչին փոքրամասնության ձեռքում: Այս զարգացումը ոչնչացնում է սեփականությունը, արդի հասարակարգի հիմքը. այս զարգացումն ինքը ձգտում է հենց այն նպատակին, որ իրենց առաջ դրել են սոցիալիստները: Սոցիալիստներին հարկավոր է միմիայն մեկ բան—հասկանալ, թե ո՛ր հասարակական ուժն է, որ արդի հասարակության մեջ ունեցած իր դրույթամբ շահագրգռու-

1 Մարքսն ու Էնգելսը բազմաթիվ անգամ էին մատնանում, որ նրանք իրենց մտավոր զարգացման մեջ շատ բանով են պարտական գերմանական մեծ փիլիսոփաներին ու մասնավորապես Հեգելին: Ընթե՛նք գերմանական փիլիսոփայությունը,—ասում է Էնգելսը,—գիտական սոցիալիզմն էլ չէր լինի»:

ված է սոցիալիզմի իրականացմամբ, և այս ուժին հաղորդել իր շահերի ու պատմական խնդրի գիտակցությունը: Այսպիսի ուժը պրոլետարիատն է: Նրա հետ էնգելսը ծանոթացավ Անգլիայում, անգլիական արդյունաբերության կենտրոնում, Մանչեստրում, ուր նա տեղափոխվել էր 1842 թվականին՝ ծառայության մտնելով մի առևտրական տան մեջ, որի բաժնետերերից մեկը նրա հայրն էր: Այստեղ էնգելսը միայն Փարրիկայի գրասենյակում չէր նստում, —նա շրջում էր կեղտոտ թաղերում, որտեղ ծվարած էին բանվորները, նա իր աչքերով տեսնում էր նրանց աղքատությունն ու թշվառությունները: Բայց նա չէր գոհանում անձնական դիտողություններով. նա կարգաց այն ամենը, ինչ որ նրանից առաջ գտնված էր անգլիական բանվոր դասակարգի դրուժյան մասին. նա ջանադիր ուսումնասիրեց այն բոլոր պաշտոնական վավերագրերը, որ մատչելի էին նրան: Այս ուսումնասիրությունների և դիտողությունների պտուղը եղավ «Բանվոր դասակարգի դրուժյունն Անգլիայում» գիրքը, որ լույս տեսավ 1845 թվականին: Մենք վերևում արդեն հիշատակեցինք, թե ո՛րն է էնգելսի երախտիքը, իբրև «Բանվոր դասակարգի դրուժյունն Անգլիայում» գրքի հեղինակի: Էնգելսից առաջ էլ շատ-շատերը նկարագրել էին պրոլետարիատի տանջանքները և մասոնացույց էին արել նրան օգնելու անհրաժեշտություն վրա: Առաջինն էնգելսն էր, որ ասաց, թե պրոլետարիատը տառապող դասակարգ չէ միայն, և թե հենց այն տնտեսական անարգ դրուժյունը, որի մեջ գտնվում է պրոլետարիատը, սրան անզսպելի թափով առաջ է մղում և հարկադրում է պայքարելու իր վերջնական ազատագրության համար: Իսկ կռվող պրոլետարիատն իմֆը կօգնի իրեն: Բանվոր դասակարգի քաղաքական շարժումը բանվորներին անխուսափելիորեն կբերի այն գիտակցության, թե նրանց համար սոցիալիզմից դուրս ելք չկա: Մյուս կողմից, սոցիալիզմը միայն այն ժամանակ ուժ կլինի, երբ կդառնա բանվոր դասակարգի քաղաքական պայքարի նպատակ: Ահա էնգելսի՝ Անգլիայի բանվոր դասակարգի դրուժյանը նվիրած

գրքի հիմնական մտքերը, մտքեր, որ հիմա յուրացրել է ամբողջ մտածող ու մարտնչող պրոլետարիատը, բայց որոնք բոլորովին նոր մտքեր էին այն ժամանակ: Այս մտքերը շարադրված էին մի գրքում, որ գրված էր հակաշտակիչ ոգով և լի էր անգլիական պրոլետարիատի թշվառությունների ամենից ստույգ ու ցնցող պատկերներով: Այս գիրքը սարսափելի մեղադրանք էր կապիտալիզմի ու բուրժուազիայի հասցեին: Նրա թողած տպավորությունը շատ մեծ էր: Մեծուրեք սկսեցին էնգելսի գիրքը վկայակոչել իբրև արդի պրոլետարիատի դրուժյան լավագույն պատկեր: Եվ իրոք, ո՛չ 1845 թվականից առաջ, ո՛չ էլ: ավելի հետո երևան չի եկել բանվոր դասակարգի թշվառությունները այդքան վառ ու ճշմարիտ նկարագրություն:

Էնգելսը սոցիալիստ դարձավ Անգլիայում միայն: Մանչեստրում նա կապեր հաստատեց այն ժամանակվա անգլիական բանվորական շարժման գործիչների հետ և սկսեց գրել անգլիական սոցիալիստական հրատարակություններում: 1844 թվականին, Գերմանիա վերադառնալիս, նա ճանապարհին Փարիզում ծանոթացավ Մարքսի հետ, որի հետ առաջուց արդեն նամակագրություն էր հաստատել: Մարքսը Փարիզում Փրանսական սոցիալիստների ու Փրանսական կյանքի ազդեցություն տակ նույնպես սոցիալիստ էր դարձել: Այստեղ ընկերները միասին գրեցին «Սուրբ ընտանիք կամ քննադատական քննադատություն» գիրքը: Այս գրքում, որը լույս է տեսել «Բանվոր դասակարգի դրուժյունն Անգլիայում» գրքից մի տարի առաջ և որը մեծ մասամբ Մարքսի գրածն է, գրված են այն ուղղություն-մատերիալիստական սոցիալիզմի հիմքերը, որի գլխավոր մտքերը մենք շարադրեցինք վերևում: «Սուրբ ընտանիք» — փիլիսոփա Բաուեր եղբայրների ու սրանց հետևորդների ծաղրական կոչումն է: Այս պարոնները քարոզում էին մի քննադատություն, որը բարձր է կանգնած ամեն մի իրականությունից, բարձր է կանգնած պարտիաներից ու քաղաքականությունից, ժխտում է ամեն մի

պրակտիկ գործունեություն և լուկ «քննադատորեն» մտա-
հայտում է շրջապատող աշխարհն ու սրանում կատարվող
դեպքերը: Պարոնայք Բաուերները բարձրից էին դատում
պրոլետարիատին, իբրև ոչ-քննադատական մասսայի մասին:
Այս անհեթեթ ու վնասակար ուղղության դեմ վճռականո-
քեն ծառացան Մարքսն ու Էնգելսը: Հանուն իրական
մարդկային անհատականության—հանուն բանվորի, որին
տրորում են տիրող դասակարգերն ու պետությունը,—
նրանք պահանջում են ո՛չ թե մտահայեցողություն, այլ
պայքար հասարակության լավագույն յաղմակիրպուլթյան
համար: Նրանք, իհարկե, պրոլետարիատի մեջ են տեսնում
այն ուժը, որը կարող է այսպիսի պայքար մղել և չահա-
գրգռված է այս պայքարով: Էնգելսը դեռևս «Մուրբ ընտա-
նիքից» էլ առաջ Մարքսի ու Ռուգեի՝ «Գերման-Ֆրանսա-
կան ժուռնալում» տպագրել էր իր «Քննադատական ուրվա-
դները քաղաքատնտեսության վերաբերյալ», որոնցում նա
սոցիալիզմի տեսակետից է քննել արդի տնտեսակարգի հիմ-
նական երևույթները, իբրև մասնավոր սեփականության
տիրապետության անհրաժեշտ հետևանքներ: Էնգելսի հետ
ունեցած չփոփոխվող անվիճելիորեն նպաստեց այն բանին, որ
Մարքսը վճռեց զբաղվել քաղաքատնտեսությամբ, այն գի-
տություն, որի մեջ մի ամբողջ հեղաշրջում առաջ բերին
նրա աշխատությունները:

1845-ից մինչև 1847 թվականը եղած ժամանակն Էնգել-
սը անցկացրեց Բրյուսսելում ու Փարիզում՝ գիտական
զբաղմունքները միացնելով Բրյուսսելի ու Փարիզի գերմա-
նական բանվորների շրջանում կատարած պրակտիկ գոր-
ծունեության հետ: Այստեղ Էնգելսն ու Մարքսը հարաբե-
րություններ հաստատեցին գերմանական «Կոմունիստների
միություն»-հետ, որը գաղտնի միություն էր և որը նրանց
հանձնարարեց շարադրել իրենց մշակած սոցիալիզմի հիմ-
նական սկզբունքները: Այսպես առաջ եկավ Մարքսի ու Էն-
գելսի հռչակավոր «Կոմունիստական պարտիայի մանիֆես-
տը», որ տպագրվեց 1848 թվականին: Այս փոքրիկ գրք-
քույկն արժե ամբողջ հատորների. նրա ոգով է ապրում և

չարժվում մինչև այժմ քաղաքակիրթ աշխարհի ամբողջ
կազմակերպված ու մարտնչող պրոլետարիատը:

1848 թվականի ռեվոլյուցիան, որ բռնկվեց նախ Ֆրան-
սիայում ու հետո տարածվեց Արևմտյան Եվրոպայի մյուս
երկրներում էլ, Մարքսին ու Էնգելսին հայրենիք բերեց:
Այստեղ, Հոենսոյան Պրուսիայում նրանք դեմոկրատական
«Նոր Հոենսոյան Լրագրի» գլուխ կանգնեցին, որը հրատա-
րակվում էր Քյոլնում: Երկու ընկերները Հոենսոյան Պրու-
սիայում բոլոր ռեվոլյուցիոն-դեմոկրատական ձգտումների
հոգին էին: Մինչև վերջին հնարավորությունը նրանք
պաշտպանում էին ժողովրդի ու աղատության շահերը հե-
տադիմական ուժերից: Վերջիններս, ինչպես հայտնի է,
հաղթեցին: «Նոր Հոենսոյան Լրագիրն» արգելվեց: Մարք-
սը, որ իր հմիդրանական կյանքի ընթացքում կորցրել էր
պրուսահայապակի իրավունքները, վտարվեց, իսկ Էնգելսը
մասնակցեց ժողովրդական զինված ապստամբությանը,
երեք ճակատամարտում կռվեց ազատության համար և
ապստամբների պարտությունից հետո Շվեյցարիայի վրա-
յով փախավ Լոնդոն:

Հենց այստեղ հաստատվեց նաև Մարքսը: Էնգելսը չու-
տով նորից դարձավ գործակատար, իսկ հետո էլ բաժնե-
տեր Մանչեստրում, այն առևտրական տան մեջ, որտեղ նա
ծառայել էր 40-ական թ. թ.: Մինչև 1870 թվականը նա
ապրում էր Մանչեստրում, իսկ Մարքսը՝ Լոնդոնում, մի
հանգամանք, որ նրանց չէր խանգարում ամենալինդանի հո-
գևոր կապ ունենալ իրար հետ. նրանք գրեթե ամեն օր նա-
մական էին գրում իրար: Այս նամակագրության մեջ ըն-
կերներն իրենց հայացքներն ու գիտելիքներն էին փոխանա-
կում մեկ-մեկու հետ և շարունակում էին գիտական սո-
ցիալիզմը միասին մշակել: 1870 թ. Էնգելսը տեղափոխվեց
Լոնդոն, և մինչև 1883 թ., մինչև Մարքսի մահվան տա-
րին, շարունակվել է նրանց միատեղ հոգևոր կյանքը, որ լի
էր լարված աշխատանքով: Սրա պտուղները եղան—Մարք-
սի կողմից՝ «Կապիտալը», մեր դարի մեծագույն քաղաքա-
տնտեսական ստեղծագործությունը, Էնգելսի կողմից՝ մի

ամբողջ շարք խոշոր ու մանր երկեր: Մարքսն աշխատում էր կապիտալիստական տնտեսության բարդ երևույթները քննության վրա: Էնգելսը շատ մատչելի գրված, հաճախ բանավեճային աշխատությունների մեջ լուսաբանում էր ամենից ընդհանուր գիտական հարցերը և անցյալի ու ներկայի զանազան երևույթները՝ պատմության մատերիալիստական ըմբռնման ու Մարքսի տնտեսագիտական թեորիայի ոգով: Էնգելսի այս աշխատություններից անուն-անուն ասենք.—*Դյուրինգի դեմ ուղղված բանավեճային երկը* (սրա մեջ քննված են մեծագույն հարցերը փիլիսոփայության, բնագիտության ու հասարակական գիտությունների ասպարեզից)¹, *«Ընտանիքի, սեփականության և պետության ծագումը»* (թարգմանված է ռուսերեն, հրատարակված է Մ.—Պետերբուրգում, 3-րդ հրատ., 1895), *«Լուգվիզ Փոյերթախ»* (Գ. Պլեխանովի ռուսերեն թարգմանությունը՝ ծանոթագրություններով, Ժընև, 1892), հոգված ռուսական կառավարության արտաքին քաղաքականության մասին (ռուսերեն թարգմանված է Ժընևի «Социал-демократ»-ի մեջ, №№ 1 ու 2), երևելի հողվածները բնակարանային հարցի մասին, վերջապես, երկու փոքր, բայց շատ արժեքավոր հոդված Ռուսաստանի տնտեսական դարգացման մասին (*«Ֆրիդրիխ Էնգելսը Ռուսաստանի մասին»*, ռուսերեն թարգմանել է Վ. Ի. Ջասուլիչը, Ժընև, 1894): Մարքսը մեռավ՝ չկարողանալով վերջնականորեն մշակել իր վիթխարի աշխատությունը կապիտալի մասին: Սակայն այս աշխատությունը սևագիր վիճակում արդեն պատրաստ էր, և ահա Էնգելսն իր ընկերոջ մահվանից հետո ձեռնամուխ եղավ *«Կապիտալի»* II ու III հատորները մշակելու և հրատարակելու ծանր աշխատանքին: 1885 թ. նա հրատա-

¹ Այս մի զարմանալիորեն բովանդակալի և ուսանելի գիրք է: Սրանից, դժբախտաբար, ռուսերեն թարգմանված է մի փոքրիկ մասը միայն, որ պարունակում է սոցիալիզմի զարգացման պատմական ուղիագիծը (*«Развитие научного социализма»*, «Գիտական սոցիալիզմի զարգացումը», 2-րդ հրատ., Ժընև, 1892 թ.): (*«Անտի-Դյուրինգի»* ռուսերեն լրիվ թարգմանությունը լույս է տեսել 1904 թ.: հմբ.):

րակեց II հատորը, 1894 թ.: III-ը (IV հատորը նա ժամանակ չունեցավ մշակելու): Այս երկու հատորն իրենց վրա թափելիք շատ մեծ աշխատանք էին սրահանջում: Այստիպական սոցիալ-դեմոկրատ Ադլերը ճիշտ է նկատել, որ *«Կապիտալի»* II ու III հատորների հրատարակությունը Էնգելսն իր հանձարեղ ընկերոջը մեծակերտ արձան է կանգնեցրել, որի վրա ակամայից քանդակել է իր սեփական անունն անջնջելի գծերով: Իսկապես, *«Կապիտալի»* այս երկու հատորը երկուսի—Մարքսի ու Էնգելսի—աշխատությունն են: Հնագույն ավանդությունները պատմում են բարեկամության զանազան սրտաշարժ օրինակների մասին: Եվրոպական պրոլետարիատը կարող է ասել, որ նրա գիտությունն ստեղծել են երկու գիտնականներ ու մարտիկներ, որոնց հաբաբները թույլ են տալիս զրույցներից, որ սրտամում են մարդկային բարեկամության մասին: Էնգելսը միշտ,—և, ընդհանուր առմամբ, միանգամայն իրավացի,—իրեն դնում էր Մարքսից հետո: *«Մարքսի ժամանակ,—գրում է նա մի հին ընկերոջ,—ես երկրորդ ջուլթակն էի նվազում»*: Նրա սերը դեպի կենդանի Մարքսը և ջերմեռանդ գուրգուրանքը մեռածի հիշատակի հանդեպ անսահման էին: Այս մոայլադեմ մարտիկն ու խստապահանջ մտածողը խորապես սիրող հոգի ուներ:

1848—49 թ.թ. շարժումից հետո Մարքսն ու Էնգելսը տարագրության մեջ միմիայն գիտությունը չէին պարապում: Մարքսը 1864 թ. ստեղծեց *«Բանվորների Միջազգային Ընկերությունը»* և մի ամբողջ տասնամյակ ղեկավարում էր այս ընկերությունը: Նրա գործերում կենդանի մասնակցություն էր ունենում նաև Էնգելսը: Մարքսի մտքի համաձայն՝ բոլոր երկրների պրոլետարիատին միացնող *«Միջազգային Ընկերության»* գործունեությունը վիթխարի նշանակություն ունեցավ բանվորական շարժման զարգացման մեջ: Բայց *«Միջազգային Ընկերության»*՝ 70-ական թվականներին տեղի ունեցած փակումով էլ չընդհատվեց Մարքսի ու Էնգելսի միավորիչ դերը: Ընդհակառակը, կարելի է

ասել, որ նրանց՝ իրրե բանվորական շարժման հոգևոր ղեկավարները՝ դերը շարունակ աճում էր, որովհետև անընդհատ աճում էր բուն իսկ շարժումն էլ: Մարքսի մահվանից հետո էնգելսը միայնակ էր շարունակում եվրոպական սոցիալիստների խորհրդատուն ու ղեկավարը լինել: Մորհուրդներ ու ցուցումներ ստանալու նպատակով հալասաբապես նրան էին գրում թե՛ գերմանական սոցիալիստները, որոնց ուժն արագ ու անընդհատ մեծանում էր, չնայած կառավարական հալածանքներին, թե՛ հեռամնաց երկրների ներկայացուցիչները—օրինակ՝ իսպանացիները, ռումինացիները, ռուսները, որոնք հարկ էին ունենում խորհելու և կշռադատելու իրենց անդրանիկ քայլերը: Նրանք բոլորը ծերունի էնգելսի գիտելիքների ու փորձի հարուստ դանձարանից առատորեն վերցնում էին՝ ինչ որ պետք էր իրենց:

Մարքսն ու էնգելսը, որոնք երկուսով էլ գիտեին ռուսերեն և կարդում էին ռուսական գրքեր, խիստ հետաքրքրվում էին Ռուսաստանով, համակրությամբ հետևում էին ռուսական ռեոլուցիոն շարժմանը և հարաբերություններ ունեին ռուսական ռեոլուցիոններների հետ: Նրանք երկուսն էլ սոցիալիստ էին դարձել դեմոկրատ լինելուց հետո, և նրանց մեջ անչափ զորեղ էր քաղաքական կամայականությունից նկատմամբ տաժաժ ատելութան դեմոկրատական զգացմունքը: Այս անմիջական քաղաքական զգացմունքը և քաղաքական կամայականություն ու տնտեսական հարստահարման կապի թեորիական խոր ըմբռնումը, ինչպես և կյանքի հարուստ փորձը Մարքսին ու էնգելսին հատկապես հենց ֆալստիկյան տեսակետից անչափ զգալուն էին դարձրել: Այս պատճառով էլ ռուսական ռեոլուցիոններների փոքրաքանակ խմբակի հերոսական կռիվն ընդդեմ ցարական հզոր կառավարություն՝ ամենահամակրական արձագանք էր գրտնում այս փորձված ու կոփված ռեոլուցիոններների հոգու մեջ: Ընդհակառակը, կարծեցյալ տնտեսական օգուտներ ստանալու համար արված այն նկրտումները, որոնց նպատակն էր երես շուռ տալ ռուսական սոցիալիստների ամե-

նասնմիջական ու կարևոր խնդրից—քաղաքական ազատություն նվաճելուց—բնականաբար կասկածելի էին երևում նրանց աչքին և մինչև անգամ ուղղակի դավաճանություն համարվում սոցիալիստական շարժման մեծ գործի նկատմամբ: «Միտեալ իրարի ազատագրությունը պետք է նրասեփական գործը լինի»,—հա թե մշտապես ինչ էին սովորեցնում Մարքսն ու էնգելսը: Իսկ իր տնտեսական ազատագրություն համար պայքարելու նպատակով պրոլետարիատը պետք է որոշ ֆալստիկյան իրավունքներ նվաճի իր համար: Բացի սրանից, թե՛ Մարքսը և թե՛ էնգելսը պարզորոշ տեսնում էին, որ Ռուսաստանում լինելիք քաղաքական ռեոլուցիոն վիթխարի նշանակություն է ունենալու Արևմտյան Եվրոպայի բանվորական շարժման համար էլ: Ինքնակալական Ռուսաստանը միշտ էլ եղել է ամբողջ եվրոպական ռեակցիայի հենարանը: Այն արտասովոր բարենպաստ միջավայրին դրուկությունը, որի մեջ դրեց Ռուսաստանին 1870 թվականի սրտեբաղմը, որը երկարատև պառակտում առաջացրեց Գերմանիայի ու Ֆրանսիայի միջև, իհարկե միայն մեծացրեց ինքնակալական Ռուսաստանի նշանակությունն, իբրև հետադիմական մի ուժի: Միմիայն քաղաք Ռուսաստանը, որ ոչ կարիք ունի լեհերին, Ֆիններին, գերմանացիներին, հայերին ու մյուս մանր ժողովուրդներին ճնշելու և ոչ էլ Ֆրանսիային ու Գերմանիային մշտապես իրար դեմ սրելու,—հնարավորություն կտա արդի Եվրոպային ազատ շունչ քաշելու ռազմական ծանրաբեռնումներից, կթուլացնի Եվրոպայի բոլոր հետադիմական տարրերին և կմեծացնի եվրոպական բանվոր դասակարգի ուժը: Ահա թե ինչու էնգելսն Արևմուտքի բանվորական շարժման հաջողությունների համար էլ ջերմադին ցանկանում էր, որ Ռուսաստանում քաղաքական ազատություն հաստատվի: Ռուսական ռեոլուցիոններները հանձին նրա կրքերին իրենց լավագույն բարեկամին:

Հավերժ հիշատակ Ֆրիդրիխ էնգելսին, պրոլետարիատի մեծ մարտիկին և ուսուցչին:

Գրված է 1895 թ. աշնանը:



Յոժեպիկ Բ. Մարտիրոսյան
Տեխն. խմբ. Ս. Խաչատրյան
Սրբազրիչ Հ. Դուրսեան
Կոնարու սրբազրիչ Լ. Արուստ

Հանձնվել է արտադրության 26/XI 1940 թ.

Ստորագրվել է ապրիլ 29/XI 1940 թ.

Հրատ. № 855, պատկեր № 344, տիրաժ 5000

Заказ № 344, тираж 5000

Գինը 20 Կ.

Բաղաճական զրականության պետական հրատարակչության
տպարան, Յերևան, Ալլահվերդյան № 65

Типография Гос. изд. полит. литературы,

Ереван, Аллавердян № 65

ՎՅ 2084

ՀՀ Ազգային գրադարան



NL0178925

ԳԻՆԸ 20 Կ.

В. И. ЛЕНИН

ФРИДРИХ ЭНГЕЛЬС

Государственное издательство политической литературы
Ереван ● 1940